Հաստատված է
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
«07» դեկտեմբերի 2023 թ. թիվ 190 նիստում
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն
_____ Ա. Սարգսյան

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

2023Թ. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ

***/առ 07.12.2023/***

***Ներգնա և արտագնա շարժունություն***

***ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ***

- Ս.թ. մարտի 5-ից 9-ը ԳԿՄԿ դեկան Ատոմ Մխիթարյանը մասնակցել է <<Կրթության քաղաքականության կենտրոնների եվրոպական ցանց՝ NEPC>> գլխավոր անսամբլեային և վարչության նիստին ք. Սկոպյեում, Հյուսիսային մակեդոնիայի հանրապետություն: /1 ՎԿ/
- Ս.թ. մարտի 8-ից 19-ը ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Ա. Իշխանյանը դասախոսություններ է կարդացել Տուշայի համալսարանում, Իտալիա: /1 ՊԴԿ/
- Ս.թ. մարտի 15-ից 19-ը գիտահետազոտական աշխատանքների գծով փոխտնօրեն Ն. Հակոբյանը մասնակցել է <<Հարատև ուսուցում և մեծահասակների համար կրթություն>> և <<Գիտական կրթության նոր հեռանկարներ>> միջազգային գիտաժողովներին, Իտալիա: /1 ՎԿ/
- Ս.թ. ապրիլի 25-ից 27-ը ԱՐՄԴՈԿՏ ծրագրի շրջանակներում ԳԿՄԿ աշխատանքային խումբը մասնակցել է Ժան Մուլեն Լիոն 3 համալսարանում կազմակերպված վերապատրաստմանը: /6 ՎԿ/
- Ս.թ. մայիսի 3-ից 5-ը ԳԿՄԿ դեկան Ատոմ Մխիթարյանը մասնակցել է <<Կրթության քաղաքականության կենտրոնների եվրոպական ցանց՝ NEPC>> վարչության նիստին ք. Զագրեբում, Խորվաթիա: /1 ՎԿ/
- Ս.թ. մայիսի 22-ից 26-ը ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ աշխատակազմը Տուշայի համալսարանում մասնակցել են «Աշխատակազմի վերապատրաստման միջազգային շաբաթ»-ին, Իտալիա: /7 ՊԴԿ և 4 ՎԿ/
- Ս.թ. հունիսի 6-8-ը ԳԿՄԿ աշխատանքային թիմը մասնակցել է «Ակվակուլտուրայի և ձկնային տնտեսության կրթության զարգացումը հանուն Կանաչ գործարքի Հայաստանում և Ուկրաինայում. կրթությունից դեպի էկոլոգիա» (AFISHE) ծրագրի կոորդինացիոն հանդիպման ք. Նիտրայում, Խորվաթիա/3 ՎԿ/
- Ս.թ. հունիսի 9-15-ը Տուշայի համալսարանի երկու դասախոս դասախոսություններ են կարդացել <<Իրավագիտություն>> ամբիոնում: /2 ՊԴԿ/
- Ս.թ. հոկտեմբերի 2-6ը ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի արտաքին կապերի բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է Լեհաստանի WSB համալսարանի կողմից կազմակերպված միջազգային վերապատրաստման շաբաթին, որին մասնակցում են շուրջ 15 օտարերկրյա համալսարանի 40 ներկայացուցիչ: /1 ՎԿ/
- Ս.թ. հոկտեմբերի 18-20-ը ԳԿՄԿ դեկան Ատոմ Մխիթարյանը մասնակցել է Կրթության գործատուների եվրոպական դաշնության գիտաժողովին, Վենետիկ, Իտալիա:
- Ս.թ. նոյեմբերի 6-10-ը ԳԿՄԿ գիտահետազոտական աշխատանքների գծով փոխտնօրեն Ն. Հակոբյանը մասնակցել է Տեխնիկական և ակադեմիական հետազոտությունների ինստիտուտի կողմից կազմակերպված միջազգային գիտաժողովին:
- Ս.թ. նոյեմբերի 13-17-ը ԳԿՄԿ աշխատանքային խումբը մասնակցել է «4th staff week

Partnerships for Future Cooperation» վերապատրաստմանը Սուրբ Կյուրեղի և Մեթոդիոսի անվան Վելիկո Տիռնովոյի համալսարանում, Բուլղարիա: /5 ՎԿ/

- Ս.թ. նոյեմբերի 28-ից 30-ը ԳԿՄԿ դեկան Ատոմ Մխիթարյանը, ՈԱ բաժնի պետ Նարինե Վարդանյանը և Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի վարիչի տեղակալ Նարինե Մանուկյանը մասնակցել են <<Կրթության քաղաքականության կենտրոնների եվրոպական ցանցի՝ NEPC>> գլխավոր անսամբլեային և <NEPC Primary Colors of Education Conference – ARISE FOR WELL-BEING>> համաժողովին ք. Տիրանայում, Ալբանիայի հանրապետություն: /2 ՎԿ/

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ և ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ

**ԳԱՑ ցուցանիշ 6.1. Արտասահմանյան գործընկեր կազմակերպությունների թիվը**

| | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020* | 2021 | 2022 | 2023 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Պայմանագրերի թիվը | 18 | 25 | 24 | 33 | 40 | 51 | 59 | 79 |
| Գործուղումների թիվը ըստ գործընկերների | 6 | 11 | 15 | 37 | 0* | 5 | 33 | 35 |

***ԳԱՑ ցուցանիշ 6.2 Այցելություններ/ գործուղումներ արտասահմանից ԳԿՄԿ***

| | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 | 2023 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Այցելություններ/ գործուղումներ արտասահմանից ԳԿՄԿ | 9 | 12 | 6 | 13 | 0* | 3 | 5 | 2 |

***Ցուցանիշ 6.3 Արտասահմանում սովորող ԳԿՄԿ ուսանողների թիվը***

| | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 | 2023 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արտագնա ուսանողների թիվ | 8 | 2 | 14 | 8 | 0* | 3** | մագ՝ 5<br>ասպ՝ 4 | 0*, ** |
| Ներգնա օտարերկրյա ուսանողների թիվ | | | | 2 | 0* | 0 | մագ՝ 1<br>ասպ՝ 2 | 0 |

* 2022-2023 ուստարվա երկրորդ կիսամյակում հրապարակվել է շարժունության 4 մրցույթ հետևյալ մասնագիտությունների համար՝ <<Իրավագիտություն>>, <<Գործարար վարչարարություն>>, <<Երկրաբանություն>> և <<Արևելագիտություն>>, սակայն տեղերը թափուր են մնացել: Այս կապակցությամբ ՈԱ բաժինն իրականացրել է հարցումը, համաձայն որի՝

Ամփոփելով հարցման արդյունները կարող ենք նշել, որ ուսանողների մասնագիտությունների համար հայտարարված Էրազմուս+ միջազգային շարժունության ծրագրին չմասնակցելու հիմնական պատճառներն են ուսանողների հետաքրքրված չլինելը և օտար լեզվին չտիրապետելը: Հարցման ընդհանրական արդյունքները ներկայացված են գծապատկեր 2-ում:

*Գծապատկեր 2.*




** 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակում հրապարակվել է շարժունության 4 մրցույթ հետևյալ մասնագիտությունների համար՝ <<Գործարար վարչարարություն>>, <<Երկրաբանություն>> <<Արևելագիտություն>>, և <<Հոգեբանություն>>, որի արդյունքներով 2 ուսանող 2023-2024 ուստարվա երկրորդ կիսամյակը ուսանելու են ԳԿՄԿ օտարերկրյա գործընկեր բուհերում:

## ***Բաժնի կողմից մասնակցած միջոցառումներ***

- 2023թ. փետրվարի 1-ին բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է «Եվրահանձնաժողովի FTOP Պորտալում Էրազմուս+ նախագծերի կառավարմանը նվիրված առցանց տեղեկատվական հանդիպմանը:
- 2023թ. ապրիլի 25-ից 27-ը ԱՐՄԴՈԿՏ ծրագրի շրջանակներում բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է Ժան Մուլեն Լիոն 3 համալսարանում կազմակերպված վերապատրաստմանը:
- 2023թ. մայիսի 22-ից 26-ը բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է Տուշայի համալսարանի «Աշխատակազմի վերապատրաստման միջազգային շաբաթ»-ին, Իտալիա:
- 2023թ. մայիսի 30-ին բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է Էրազմուս+ ծրագրի Ազգային մեկնարկային օրվանը:
- 2023թ. հունիսի 6-8-ը բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է «Ակվակուլտուրայի և ձկնային տնտեսության կրթության զարգացումը հանուն Կանաչ գործարքի Հայաստանում և Ուկրաինայում. կրթությունից դեպի էկոլոգիա» (AFISHE) ծրագրի կոորդինացիոն հանդիպման ք. Նիտրայում, Խորվաթիա:
- 2023թ. սեպտեմբերի 8-ին բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է ԵՄ «Հորիզոն Եվրոպա» ծրագրին նվիրված տեղեկատվական միջոցառմանը:
- 2023թ. սեպտեմբերի 12-ին բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է Եվրոպական հանձնաժողովի կողմից հեռավար ձևաչափով անցկացված՝ Էրազմուս+ կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրերի նոր հայտադիմումներ ու համաձայնագրերի նախագծեր մշակելու և ներկայացնելու վերաբերյալ տեղեկատվական միջոցառմանը:
- 2023թ. հոկտեմբերի 31-ին բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է ԱՓՇՏԱԿ-ի կողմից կազմակերպված «Կրթության շահագրգիռ կողմերին զինել կոմպետենցիաներով կեղծարարությունների բացահայտման և դրանց դեմ պայքարելու համար/DETECT» համաժողովին:
- 2023թ. նոյեմբերի 17-ին բաժնի առաջատար մասնագետ Գոհար Սարգսյանը մասնակցեց «Էրազմուս+ Տեղեկատվական օրեր 2023» հանդիպմանը Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանում:

• 2023թ. նոյեմբերի 23-ին բաժնի առաջատար մասնագետ Գոհար Սարգսյանը մասնակցեց վեբինարի՝ Էրազմուս+ ուսանողների_շարժունությամբ զբաղվող աշխատակիցների համար, ովքեր վեբինարի ընթացքում իրենց գործընկերներից կսովորեն ինչպես իրականացնել Էրազմուս+ շարժունությունը առանց թղթի:
• 2023թ.նոյեմբերի 27-ին բաժնի գլխավոր մասնագետ Էլլա Պապիկյանը մասնակցեց «Project writing and budget planning» աշխատաժողովին ՀԱԱՀ-ում:
• 2023թ. դեկտեմբերի 4-ին բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է «Info Session on the ERA TALENT Call for Multiplying the Impact of EURAXESS Researcher Careers Beyond Academia Hub» տեղեկատվական վեբինարին:
• 2023թ. դեկտեմբերի 6-ին բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է ԵՄ Հորիզոն Եվրոպա ծրագրին նվիրված տեղեկատվական միջոցառմանը ՀՀ ԳԱԱ նախագահությունում:

***<u>Բաժնի կողմից կազմակերպած միջոցառումներ</u>***

•2023թ. հունվարի 25-27-ին կազմակերպվել և անցկացվել է **«Ակվակուլտուրայի և ձկնային տնտեսության կրթության զարգացումը հանուն Կանաչ գործարքի Հայաստանում և Ուկրաինայում. կրթությունից դեպի էկոլոգիա» (AFISHE) Էրազմուս+** կարողությունների զարգացման ծրագրի մեկնարկային հանդիպումը ԳԿՄԿ-ում:
•2023թ. մարտի 16-ին կազմակերպվել և անցկացվել է գործատուների հանդիպում ԳԿՄԿ-ում **«Ակվակուլտուրայի և ձկնային տնտեսության կրթության զարգացումը հանուն Կանաչ գործարքի Հայաստանում և Ուկրաինայում. կրթությունից դեպի էկոլոգիա» (AFISHE) Էրազմուս+** կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում:
•2023թ. մարտի 23-ին կազմակերպվել է տեղեկատվական առցանց հանդիպում Տուշայի համալսարան մեկնող ՊԴ եվ վարչական համակազմերի համար:

**Էրազմուս+ կարողությունների զարգացման ծրագիր**
Կենտրոնը մասնակցում է՝

- **«Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան» (ARMDOCT)** Էրազմուս+ կարողությունների զարգացման ծրագրին, որի շրջանակներում ապրիլի 24-28 կազմակերպվել է այցելություն Ֆրանսիայի Լիոն քաղաք: Մասնակիցները ուսումնասիրել են դոկտորական դպրոցների և բարձրագույն կրթության երրորդ մակարդակի համատեղ կրթական ծրագրերի կազմակերպման ֆրանսիական փորձը և ներհամալսարանական կանոնակարգերը: ԳԿՄԿ-ն Եվրասիա միջազգային համալսարանի հետ մշակել է «Կայուն զարգացում» ընդհանուր խորագրով ասպիրանտական համատեղ կրթական ծրագիր, ինչպես նաև դրա գործարկման համար անհրաժեշտ փաստաթղթերը, երկու բուհերի միջև ստորագրվել է համագործակցության համաձայնագիր: Տեղի է ունեցել ծրագրի շրջանակներում հիմնված մեդիա-լաբորատորիայի բացումը:
- **«Ակվակուլտուրայի և ձկնային տնտեսության կրթության զարգացումը հանուն Կանաչ գործարքի Հայաստանում և Ուկրաինայում. կրթությունից դեպի էկոլոգիա» (AFISHE) Էրազմուս+** կարողությունների զարգացման ծրագրին: Իրականացվել է նմանատիպ կրթական ծրագրերի բենչմարքինգ ուսումնասիրություն, կազմակերպվել է գործատուների հետ հանդիպում, մշակվել է «Ձկնային տնտեսություն» համատեղ ՄԿԾ-ի կրթական

վերջնարդյունքները և ուսումնական պլանը, տեղի է ունեցել ծրագրի կոորդինացիոն հանդիպում ք. Նիտրայում, Խորվաթիա, ձեռք է բերվել 10 անուն համակարգչային և լաբորատոր սարքավորումներ ծրագրի շրջանակներում ստեղծվելիք լաբորատորիայի համար, ընտրվել է համատեղ կրթական ծրագրի պրոֆեսորադասախոսական կազմը և մեկնարկել են առարկական նկարագրերի և ուսումնամեթոդական նյութերի մշակման աշխատանքները, մեկնարկել են «Ձկնային տնտեսություն» համատեղ ՄԿԾ-ի լիցենզիայի ստացման աշխատանքները:

***Կնքված նոր հուշագրեր և համաձայնագրեր***

- ***Միջազգային հուշագրեր և համաձայնագրեր***

1. Կնքվել է գիտակրթական համագործակցության համաձայնագիր Կրակովի մանկավարժական համալսարանի հետ, Լեհաստան
2. Կնքվել է միջինստիտուցիոնալ համաձայնագիր Տուշայի համալսարանի հետ, Իտալիա
3. Կնքվել է միջինստիտուցիոնալ համաձայնագիր Լիլի համալսարանի հետ, Ֆրանսիա
4. Կնքվել է փոխըմբռնման հուշագիր Կալիֆորնիայի համալսարանի Լոս Անջելեսի կամպուսի հետ
5. Կնքվել է միջինստիտուցիոնալ համաձայնագիր Բոլոնիայի համալսարանի հետ, Իտալիա
6. Կնքվել է միջինստիտուցիոնալ համաձայնագիր Ազգային կրթական հանձնաժողովի համալսարանի հետ, Լեհաստան
7. Կնքվել է համագործակցության հուշագիր Գրացի համալսարանի կենսաբանության ինստիտուտի հետ, Ավստրիա
8. Կնքվել է միջինստիտուցիոնալ համաձայնագիր Նեապոլի համալսարանի հետ, Իտալիա
9. Կնքվել է համագործակցության հուշագիր՝ համատեղ ջանքերով նպաստելու ՀՀ-ում բարձրագույն կրթության երրորդ աստիճանի զարգացմանը
10. Կնքվել է միջինստիտուցիոնալ համաձայնագիր UiT Arctic University of Norway-ի հետ, Նորվեգիա

- ***<u>Ներպետական հուշագրեր, պայմանագրեր և համաձայնագրեր</u>***

1. Կնքվել է համագործակցության համաձայնագիր ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի հետ
2. Կնքվել է համագործակցության համաձայնագիր ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի հետ
3. Կնքվել է համագործակցության հուշագիր Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հետ
4. Կնքվել է համագործակցության հուշագիր Հայաստանի Եվրոպական համալսարանի հետ
5. Կնքվել է համագործակցության հուշագիր Ինժիներական Ասոցիացիայի հետ
6. Կնքվել է համագործակցության համաձայնագիր «Ինստիգեյթ» ընկերության կողմից հիմնադրած «Գիտական հետազոտությունների զարգացման կենտրոն» հիմնադրամի հետ
7. Կնքվել է համագործակցության հուշագիր Եվրասիա միջազգային համալսարանի հետ
8. Կնքվել է համագործակցության համաձայնագիր Ինժիներական Ասոցիացիայի հետ
9. Կնքվել է բացառիկության հիմունքով ծառայությունների մատուցման պայմանագիր «ԷԴՈՒ ՆԵԹՎՈՐՔ» ՍՊԸ-ի հետ

10. Կնքվել է համատեղ հետազոտական ենթակառուցվածքի հասանելիության համաձայնագիր Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հետ

***Մշակված փաստաթղթեր՝***

- Ամբիոնների միջազգայնացմանն ուղղված հետազոտության արդյունքերի վերլուծություն /համահեղինակ/
- Հետազոտական համալսարանների միջազգայնացման դրական փորձի ուսումնասիրում ՌԴ ազգային հետազոտական համալսարանի տնտեսագիտության բարձրագույն դպրոցի օրինակով

Հաշվետու տարում բաժինը՝

- կատարվել է 14 դիպլոմի միջազգային վերիֆիկացիա,
- աջակցություն է ցուցաբերել Էրազմուս+ ծրագրի կարճաժամկետ և երկարաժամկետ վիզաների ձեռք բերման գործընթացին /ընդհանուր թիվը՝ 20/:

Սույն տարում ֆինանսավորման համար ներկայացվել են հետևյալ հայտերը՝
Կարողությունների զարգացման ծրագրեր՝

- HORIZON-WIDERA- LinkE3Global /հայտը չի ֆինանսավորվել/
- Developing and Teaching with Innovative and Inter-disciplinary Case studies for Enhancing Business Education in Armenia (CASE4BE) /հայտը չի ֆինանսավորվել/
- Developing Information, Research and Digital Skills for Business, Innovation and Entrepreneurship in Armenia and Moldova (AMIS) /հայտը չի ֆինանսավորվել/
- CANDELA (Central Asian Network on Digitalization of Education in Library and Information Sciences) /հայտը չի ֆինանսավորվել/
- APPEAR project - "Biodiversity of Invasive Plants and Fungi in Armenia" /հայտը չի ֆինանսավորվել/

***Միջազգային կրեդիտային շարժունության ծրագրեր՝***

1. Կրակովի մանկավարժական համալսարան, Լեհաստան /հայտը ֆինանսավորվել է/
2. Վելիկա Թառնովո համալսարան, Բուլղարիա /հայտը ֆինանսավորվել է/
3. Լյուվենի կաթոլիկ համալսարան, Բելգիա /հայտը ֆինանսավորվել է/
4. Միջազգային տելեմատիկ համալսարան, Իտալիա /հայտը ֆինանսավորվել է/
5. Նեապոլի համալսարան, Իտալիա /հայտը ֆինանսավորվել է/
6. Բոլոնիայի համալսարան, Իտալիա /հայտը ֆինանսավորվել է/
7. Տուշայի համալսարան, Իտալիա /հայտը ֆինանսավորվել է/
8. UiT Arctic University of Norway, Նորվեգիա /հայտը ֆինանսավորվել է/
9. Մադրիդի Կոմպլուտենսե համալսարան, Իսպանիա /հայտը ֆինանսավորվել է/
10. Նիտրայի գյուղատնտեսական համալսարան, Սլովակիա /հայտը չի ֆինանսավորվել/
11. Զալցբուրգի Փարիզ Լոդրոնի համալսարան, Ավստրիա /հայտը չի ֆինանսավորվել/
12. Պրեշովի համալսարան, Սլովակիա /հայտը չի ֆինանսավորվել/
13. Աթենքի համալսարան, Հունաստան՝ ԻԱՊԻ-ի հետ համատեղ /հայտը չի ֆինանսավորվել/
14. WSB ակադեմիա, Լեհաստան /հայտը չի ֆինանսավորվել/

**Դասախոսական անձնակազմի օտար լեզվի վերապատրաստումների կազմակերպում**

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի բարելավման պլանի շրջանակներում ս.թ. ապրիլ-մայիսին ամիսներին ՀՀ ԳԱԱ օտար լեզուների ամբիոնն անցկացրեց պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի (այսուհետ՝ ՊԴ կազմ) օտար լեզվի /անգլերեն/ թեստավորում: Նախնական հայտի համաձայն թեստավորվածների քանակը 40 էր: Արդյունքների հիման վրա ձևավորվեցին 4 տարբեր լեզվական մակարդակ ունեցող խմբեր՝ ցածր մակարդակ A1 (10 դիմորդ, 7 սերտիֆիկացված), միջինից ցածր մակարդակ A2 (12 դիմորդ, 7 սերտիֆիկացված), միջին մակարդակ B1 (11 դիմորդ, 5 սերտիֆիկացված) միջինից բարձր մակարդակ B2 (7 դիմորդ, 3 սերտիֆիկացված): Վերապատրաստմանը հատկացվեց 90 ժամ, որից 45-ը՝ լսարանային, 45-ը՝ ինքնուրույն (3 կրեդիտ): Վերապատրաստման արդյունքում հավաստագրեր ստացավ 22 դիմորդ:

Արդյունքում, հավաստագիր է ստացել թեստավորված դիմորդների մոտ 55%-ը: Ընդ որում, հետաքրքրական է, որ ցածր և միջինից ցածր մակարդակի խմբերում դիտարկվում է սերտիֆիկացման ավելի բարձր տոկոս՝ 70% և 58%, համապատասխանաբար, իսկ միջինից և միջինից բարձր մակարդակներում առավել ցածր տոկոս է գրանցվել՝ 45% և 50% համապատասխանաբար:

Մասնավորապես՝ ՊԴ կազմի շրջանակներում A1 մակարդակի լեզվի տիրապետողների թիվը 2023թ-ին աճել է՝ հասնելով 10-ի՝ ի տարբերություն է 2020թ.-ի 0 հոգու: A2 մակարդակին տիրապետողների թվում նույնպես դրական աճ է գրանցվել՝ կազմելով 12 հոգի՝ ի տարբերություն 2020թ.-ի 5 հոգու: B1 և C1 մակարդակներում փոփոխություն չի գրանցվել՝ տվյալ մակարդակների լեզվի տիրապետողների թիվը մնալով 11 և 2 հոգի համապատասխանաբար: Առավել մեծ փոփոխություն գրանցվել է B2 մակարդակում՝ արձանագրելով թվի կտրուկ նվազում 85%-ով՝ 5 հոգի՝ 2020թ. 33 հոգու հետ համեմատած:

| | 2018 | 2021 | 2023 |
|---|---|---|---|
| A1 | 9 | 0 | 10 |
| A2 | 28 | 5 | 12 |
| B1 | 14 | 11 | 11 |
| B2 | 1 | 33 | 5 |
| C 1 | 8 | 2 | 2 |
| C2 | | | |

Լավագույն բուհերի վարկանիշավորման աղյուսակներում ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի ներգրավվածության գործընթացն ապահովելու նպատակով ԳԿՄԿ-ում արդեն իսկ մեկնարկել է հայազգի արտասահմանցի դասախոսների ներգրավումը ուսումնական գործընթացում:

- 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակում Մոլեկուլային և բջջային կենսաբանության ամբիոնի «Մոլեկուլային մանրէաբանություն» առարկան առցանց տարբերակով կդասավանդի Գդանսկի (Լեհաստան) Կենսատեխնոլոգիայի և մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի գիտաշխատող Լիլիթ Հովհաննիսյանը: Լ. Հովհաննիսյանը կենսաբանական գիտությունների թեկնածու է, բազմաթիվ միջազգային գիտական հոդվածների և ուսումնական ձեռնարկների հեղինակ/համահեղինակ/թարգմանիչ:
- 2024-2025 ուստարվա առաջին կիսամյակում Երկրաբանության ամբիոնի «Ֆիզիկական հրաբխագիտություն» առարկան առցանց տարբերակով կդասավանդի Ֆրայբերգի (Գերմանիա) Լեռնային տեխնիկական համալսարանի միներալոգիայի ինստիտուտի գիտաշխատող և դասախոս Հռիփսիմե Գևորգյանը: Հ. Գևորգյանը Գերմանիայի երկրաբանական գիտությունների

դոկտոր է, բազմակի միջազգային գիտական հոդվածների հեղինակ/համահեղինակ և լավագույն գիտական աշխատանքի համար "Bernhard-von-Cotta-Preis-2021" մրցանակի դափնեկիր:

- 2023-2025 ուս.տարվա երրորդ կիսամյակում ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի երկրաբանության ամբիոնի «Մասնագիտական հաղորդակցման կարողությունների զարգացում (անգլերենով)» առարկան առցանց տարբերակով կդասավանդի Լիլի Համալսարանի (Ֆրանսիա) պրոֆեսոր Տանիել Դանիելյանը: Տ. Դանիելյանը Եվրոպայում հայտնի Evo-Eco-Paleo լաբորատորիայի փոխտնօրենն է, ինչպես նաև IRePSE (Institut de Recherches Pluridisciplinaires en Sciences de l'Environnement) շրջական միջավայրի մասին գիտությունների ինստիտուտի տնօրենը: Նա ավելի քան 141 միջազգային գիտական հոդվածների հեղինակ է, բազմաթիվ մագիստրոսների և ասպիրանտների գիտական ղեկավար, իսկ այժմ ղեկավարում է նաև ԳԿՄԿ երկրաբանության ամբիոնի և Լիլի համալասարանի միջև Էրասմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագիրը:

| Ռազմավարական նպատակ | Հիմնական գործողություն | Արդյունավետության հիմնական ցուցանիշ /KPI/ | Վերջնարդյունք | 2023թ արդյունքներ |
|---|---|---|---|---|
| Արտասահմանյան առաջատար համալսարանների և գիտակրթական կենտրոնների հետ ԳԿՄԿ-ի համագործակցության ընդլայնում, նոր կապերի ստեղծում և զարգացում, համատեղ նախագծերի, փորձի փոխանակման, կրթական ու գիտահետազոտական ծրագրերի նախաձեռնում | Ավելացնել արտասահմանյան առաջատար համալսարանների և գիտակրթական կենտրոնների հետ ԳԿՄԿ-ի համագործակցությունը | Կնքվող միջազգային համագործակցության համաձայնագրերի և փոխըմբռնման հուշագրերի թիվ | տարեկան 5 միջազգային համագործակցության համաձայնագրերի և փոխըմբռնման հուշագրերի կնքում | Կնքվել է 10 միջազգային համագործակցության և 10 արտաքին համագործակցության համաձայնագիր: |
| | Մշակել միջազգային համագործակցային ծրագրերի արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տարածման ճկուն և հանրամատչելի ուղիներ | Վեբկայքի առաջխաղացմանը խթանող լեզուների կիրառման թիվ<br>Վեբկայքի այցելուների թիվ | Վեբկայքի այցելուների թվի աճ՝ տարեկան 1% | Եռալեզու վեբկայք<br>2021թ.՝ 58523<br>2022 թ.՝ 56941<br>2023 թ.՝ 43059<br>Գրանցվել է այցելուների նվազում |
| | Ամփոփել գործունեության արդյունքները յուրաքանչյուր տարվա ավարտին՝ ըստ ԳԿՄԿ միջազգայնացման ռազմավարության խնդիրների և մշակել համապատասխան միջոցառումների ծրագիր լավագույն փորձի տարածման և թերությունների շտկման նպատակով | Բաժնի հաշվետվություն | ԳԱՑ ցուցանիշներ | Տես՝ բաժնի հաշվետվություն |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Արտասահմանյան հետազոտական համալսարանների հետ համատեղ կրթական ծրագրերի իրականացման գործընթացի շարունակականության ապահովում | Հավաքագրել և ԳԿՄԿ մասնագիտական ամբիոններին տարածել տեղեկատվություն գործող ծրագրերի, գիտական կոնֆերանսների, գիտական հոդվածների հրատարակումների հնարավորությունների վերաբերյալ | • Օտար լեզուներով հրապարակումների թիվ (տեղական և միջազգային ամսագրերում)<br>• Elsevier's Scopus database-ի կողմից ինդեքսավորված ակադեմիական ամսագրերում հրապարակված հոդվածների թիվ | տարեկան 1% աճ | 2022թ.՝ 29 հրատարակություն<br>2023թ.՝ 27 հրատարակություն<br><br>2022թ.՝ 5 հրատարակություն<br>2023թ.՝ 7 հրատարակություն |
| | Բարելավել ասպիրանտների / պրոֆեսորադասախոսական կազմի կարողությունները միջազգային հրապարակումներ ունենալու համար | Վերապատրաստումների թիվ<br>Օտար լեզուներով հրապարակումների թիվ | Վերապատրաստված դասախոսների թիվ | ***25*** դասախոս մասնակցել է միջազգային վերապատրաստումներին |
| | Նախաձեռնել համատեղ հետազոտական նախագծեր տարբեր հետազոտական պատուհանների և հիմնադրամների միջոցով (Jean Monet, Horizon2020 և այլն) | Ընթացիկ համատեղ հետազոտական ծրագրերի թիվ | Հետազոտական ծրագրերի դիվերսիֆիկացում | Առկա չէ |
| Ուսանողական և պրոֆեսորադասախոսական համակազմերի փորձի, գիտելիքների, հմտությունների ու կարողությունների փորձի փոխանակման գործընթացի ընդլայնում | Ավելացնել ԳԿՄԿ միջազգային կրեդիտային շարժունակության ծրագրերի թիվը՝ դրանով իսկ նպաստելով ԳԿՄԿ ուսանողական, պրոֆեսորադասախոսական վարչական համակազմերի շարժունակությանը | Փորձի փոխանակման համար արտասահման ուղարկվող և արտասահմանից ժամանող ուսանողական, պրոֆեսորադասախոսական վարչական համակազմերի թիվ | տարեկան 3 միջազգային կրեդիտային շարժունակության ծրագիր | Տվյալ պահի դրությամբ շահել է ***9*** կրեդիտային շարժունության ծրագիր |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Մշակել միջազգային կրեդիտային շարժունությանը վերաբերող համապատասխան փաստաթղթեր և ընթացակարգեր | Մշակված փաստաթղթերի թիվ | | Մշակվել է **2** փաստաթուղթ /մանրամասները՝ բաժնի հաշվետվություն / |
| | Կազմակերպել տեղեկատվական սեմինարներ | Կազմակերպված իրադարձությունների թիվ | | Կազմակերպվել է ***մեկ*** տեղեկատվական սեմինար |
| Կենտրոնի բոլոր մասնագիտացումներում դասավանդվող մասնագիտական դասընթացների օտարալեզու դասախոսությունների պրակտիկայի ընդլայնում | Ներդնել օտար լեզուներով դասավանդվող ծրագրեր և առանձին դասընթացներ՝ շեշտադրում կատարելով անգլերենի վրա | Օտար լեզուներով դասընթացներին մասնակցող ուսանողների թիվ,<br>Օտար լեզուներով դասավանդվող դասընթացների թիվ<br>Կրկնակի/համատեղ կրթական ծրագրերի թիվ | Օտար լեզուներով դասընթացների տարեկան 1% աճ | 2023-2024 ուս տարում օտար լեզվով դասավանդվող դասընթաց՝ **2**<br>Կրկնակի/համատեղ կրթական ծրագրերի թիվ՝ **4** |

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժին պետ՝ Ա. Հարությունյան